ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԻՐԱԲ ԱԼԲԵՐՏԻ

ՄԵՂՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2021

ИНСТИТУТ ФИЛОСОФИИ, СОЦИОЛОГИИ И ПРАВА НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РА

ВАРДАНЯН ВИРАБ АЛЬБЕРТОВИЧ

ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОНАЛИЗАЦИИ ПРИНЦИПОВ ВИНЫ И СОРАЗМЕРНОСТИ НАКАЗАНИЯ В КОНТЕКСТЕ НОВЫХ КОНСТИТУЦИОННЫХ РЕГУЛИРОВОК И ЕВРОПЕЙСКИХ ПРАВОВЫХ СТАНДАРТОВ

А В Т О Р Е Ф Е Р А Т

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - “Публичное право” (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Հ.Խաչատրյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Գ.Վաղարշյան** իրավաբանական գիտությունների թեկնածու **Ի.Վ.Սարգսյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ոստիկանության կրթահամալիր**

Պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հոկտեմբերի 18-ին՝ ժամը 15:30-ին, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում գործող՝ ԲՈԿ-ի իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0010, ք. Երևան, Արամի փողոց 44):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի սեպտեմբերի 07-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու **Ա.Ա.Աբրահամյան**

Тема диссертации утверждена в Академии государственного управления Республики Армения

Научный руководитель:	Доктор юридических наук, профессор **А.Г.Хачатрян**
Официальные оппоненты:	доктор юридических наук, профессор **А.Г.Вагаршян** кандидат юридических наук **И.В.Саргсян**
Ведущая организация:	**Образовательный комплекс полиции РА**

Защита состоится 18 октября 2021 года в 15:30 часов на заседании специализированного совета 041 по Юриспруденции ВАК РА при Институте философии, социологии и права НАН РА (0010, г. Ереван, ул. Арама 44).

С диссертацией можно ознакомиться в библиотеке института философии, социологии и права НАН РА.

Автореферат разослан 07 сентября 2021 года.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук **А.А.Абраамян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մեղքի և պատժի համաչափության սկզբունքները հանդիսանում են անձի հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման կարևոր գործոն: Բացի այդ, այս իրավական սկզբունքները հանդիսանում են պետության իրավական հիմքի պահպանման և կայունության յուրատեսակ երաշխիք: Իրավական սկզբունքները՝ ստանալով սահմանադրական ամրագրում, ստանձնում են ավելի բարձր դերակատարություն պետության ողջ իրավական համակարգում:

Եվ այսպես, մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը ներկայումս հանդիսանում են սահմանադրական սկզբունքներ, ինչով ավելի է շեշտադրվում դրանց վերապահված բարձր դերը:

Առհասարակ, «մեղք» եզրույթը՝ որևէ իմաստով, տեղ չի գտել ինչպես 1995 թվականի Սահմանադրության տեքստում, այնպես էլ 2005 թվականի Սահմանադրության փոփոխություններում, իսկ «պատիժ»-ը՝ որպես եզրույթ թեև կիրառվել է նշված Սահմանադրության տեքստերում, սակայն հիմնականում այլ համատեքստում, որի կապակցությամբ ևս անհրաժեշտ էր կատարել ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն: Նշված եզրույթների վրա հիմնված մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը՝ ամրագրվելով Սահմանադրությամբ, չեն ենթարկվել գիտահետազոտական ուսումնասիրության՝ իբրև սահմանադրական սկզբունքներ: Նման ուսումնասիրությունը թույլ կտա բացահայտել քննարկվող իրավական սկզբունքների սահմանադրահիրավական բովանդակությունը:

Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահիրավական էության բացահայտման համար անհրաժեշտ է իրականացնել ուսումնասիրություն սահմանադրահիրավական այլ դրույթների հետ փոխհարաբերությունների համատեքստում ևս:

Ժամանակակից աշխարհում հնարավոր չէ պատկերացնել իրավական պետության և ժողովրդավարության կայուն հիմքերի ձևավորում, առանց մեղքի և պատժի համաչափության սկզբունքների պահպանման և կենսագործման: Յուրաքանչյուր պետություն, որն իրեն հիչակել է որպես իրավական պետություն, գործնականում պետք է հետամուտ լինի այս սկզբունքների պահպանմանը, դրա համար ստեղծելով համապատասխան նորմատիվային հիմք: Նշված սկզբունքները պետք է կենսագործվեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Հեղինակի կողմից մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքները դիտարկվում են որպես իրավական պետության և ժողովրդավարության կայացման գործոն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Այս սահմանադրական նորմն ինքնին պետության առջև դրված նպատակ է և սոցիալական առաջադիմության ուղին նախընտրած ազգային պետականության ձգտում, ինչի համար կարևոր է սահմանադրական յուրաքանչյուր դրույթի դերը:

Անդրադառնալով քննարկվող թեմայի ընդհանուր պատմափիլիսոփայական զարգացմանը, հարկ է ուշադրություն դարձնել ոչ միայն մեր կողմից քննարկվող իրավական

սկզբունքների հիմնական տարրեր հանդիսացող «մեղք» և «պատիժ» հասկացություններին, այլ նաև իրավունքի և իրավական սկզբունքների զարգացման պատմությանը, և արդյունքում, նշված հասկացությունների կայացմանը՝ որպես իրավական սկզբունքներ:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների ամրապնդմանը զուգընթաց «մեղք» և «պատիժ» եզրույթների իրավական բովանդակությունը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է որոշակի փոփոխությունների:

Առհասարակ, իրավական սկզբունքները յուրաքանչյուր իրավական համակարգի համար ունեն առանցքային նշանակություն: Հանդիսանալով հիմնական և ելակետային օրինաչափություններ՝ դրանք մեծ դեր են ունենում իրավական համակարգի կենսագործման ու զարգացման գործում:

Իրավական սկզբունքների կարևոր դերը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Այդ գործոնների շարքին են դասվում իրավունքի զարգացման ապահովումը, իրավական համակարգի կատարելագործումը, դրանցում առկա խնդիրների լուծումը, օրենքի բացերի լրացման հնարավորությունը և այլն:

Հետաքրքրական է նաև, թե արդյո՞ք իրավական սկզբունքի ամրագրման եղանակը կարող է ազդել դրա գործառույթների ծավալի կամ արդյունավետության վրա թե ոչ, և առհասարակ ի՞նչ իրավական հետևանքների այն կարող է հանգեցնել:

Վերոնշյալ հասկացությունների, ինչպես նաև իրավունքի սկզբունքների դերին, նշանակությանը և գործառույթներին արված որոշակի անդրադարձն օժանդակում է քննարկվող սկզբունքների էության ավելի բազմակողմանի բացահայտմանը:

Իհարկե, կախված յուրաքանչյուր պետության իրավական համակարգից և դրա զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականությունից, մեր կողմից ուսումնասիրվող սկզբունքները տարբեր երկրներում իրենց ամրագրումն ու արտացոլումն են ստանում տարբեր կերպ: Այդ իսկ պատճառով աշխատանքում ուսումնասիրվել է նաև մեղքի և պատժի համաչափության սկզբունքների ամրագրման և կենսագործման առնչությամբ առկա համապատասխան միջազգային փորձը: Այսինքն, ուսումնասիրվել է մի շարք երկրներում՝ քննարկվող սկզբունքներին առնչվող ԱԲ իրավաստեղծ, ԱԲ իրավակիրառ պրակտիկան:

Աշխատանքում հեղինակը մեղքի և պատժի համաչափության սկզբունքները մեծապես դիտարկում է Սահմանադրության և սահմանադրական իրավունքի տեսանկյունից, միևնույն ժամանակ, խնդրո քննարկան առարկա հանդիսացող սկզբունքները դիտարկում է իրավունքի այլ ճյուղերի խորապատկերում, փորձելով ապահովել թեմայի՝ հնարավորինս ընդգրկուն և բազմակողմանի ուսումնասիրություն:

Խնդրո քննարկան առարկա իրավական սկզբունքների սահմանադրահրավական բնույթի, սահմանադրական ամրագրման նախադրյալների, դրա անհրաժեշտության, հետևանքների, դերի, բովանդակության և առհասարակ էության բացահայտման ուղղությամբ գրեթե չեն իրականացվել անհրաժեշտ ուսումնասիրություններ, ինչն էլ ավելի է բարձրացնում թեմայի արդիականությունը:

Ըստ էության, թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետությունում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրական ամրագրման մոդելի եզակիությամբ: Մեր երկրի իրավական համակարգում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրական ամրագրումն ինքնին առանձնահատուկ է: Որպես այդպիսին, որևէ այլ պետության հիմնական օրենքում քննարկվող սկզբունքները

նույն կերպ սահմանադրորեն ամրագրված չեն, որպիսի հանգամանքը ևս մեր կողմից դարձվել է հետազոտման առարկա:

Չկան նաև համապատասխան ուսումնասիրություններ և համեմատական վերլուծություններ մյուս սահմանադրական և այլ իրավական սկզբունքների հետ փոխհարաբերությունների համատեքստում:

Բացի այդ, թեմայի արդիականությունը պայմանավորված է սահմանադրական սկզբունքներն օրենսդրությամբ արտացոլելու խնդիրների լուծման, և արդյունքում, իրավակիրառ գործունեության հաճախ դրսևորվող անբավարար որակի բարձրացման անհրաժեշտությամբ, քանզի այդպիսի խնդիրները չլուծելու պարագայում, քննարկվող սկզբունքների համատեքստում, գործնականորեն կխախտվեն մարդու հիմնական իրավունքները և ազատությունները: Այս առումով պետք է ստեղծել «ամուր իրավական շղթա»՝ Սահմանադրությունից մինչև իրավակիրառ պրակտիկա, որպեսզի խնդրո քննարկման առարկա սկզբունքները հանդիսանան իրական երաշխիք մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում:

Աշխատությունը կարող է հանդիսանալ արժեքավոր գիտատեսական և գիտահետազոտական աղբյուր տարբեր երկրներում մեղքի և պատժի համաչափության, ինչպես նաև այլ իրավական սկզբունքների սահմանադրականացման հնարավոր գործընթացներում: Բացի այդ, աշխատությունը կարող է օգտակար աղբյուր հանդիսանալ ինչպես «մեղք» և «պատիժ» հասկացությունների իրավաբանական նշանակությանը, այնպես էլ իրավական սկզբունքների էության և դերի բացահայտմանը նվիրված հետազոտությունների համար:

Թեմայի շրջանակներում վեր հանված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված արդյունավետ մեխանիզմներ մշակելու նպատակով կատարված վերլուծությունները նույնպես պայմանավորված են ատենախոսության թեմայի արդիականությամբ:

Ոլորտի ուսումնասիրությունը տալիս է հնարավորություն կատարել մի շարք հետևություններ և եզրահանգումներ, որի արդյունքում առաջ եկած հիմնախնդիրները պահանջում են օրենսդրական նոր մշակումներ, հայեցակարգեր և կարգավորումներ:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Ատենախոսության մեջ քննարկվել են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլվել են տարբեր հեղինակների աշխատություններում: Սակայն մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրաիրավական բովանդակությունն ու նշանակությունը, ինչպես նաև դրանց սահմանադրականացման հիմնախնդիրներն առանձին համալիր գիտական քննարկման ու սահմանադրաիրավական վերլուծության առարկա չեն դարձվել, ինչը կատարվել է այս աշխատանքում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտությունում նպատակ է դրվել իրավաբանական գիտության ընդհանուր տեսական դրույթների, հայրենական ու միջազգային փորձի ամփոփման, ինչպես նաև գոյություն ունեցող պրակտիկայի հիման վրա վեր հանել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրական ամրագրման նախադրյալներն ու հետևանքները, բացահայտել հայրենական իրավական համակարգում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրաիրավական դերը, ինչպես նաև առաջարկել այնպիսի լուծումներ, որոնք կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների ապահովման և կիրառման կառուցակարգերի ձևավորմանը: Ատենախոսության նպատակն է նաև ի հայտ բերել մեղքի և պատժի

համաչափության սկզբունքների ամրագրման և կիրառման միջազգային փորձը, տարբեր երկրներում դրանց սահմանադրականացման հայեցակարգերի ձևավորման հնարավորությունները՝ հայրենական իրավական համակարգում դրանց սահմանադրական կարգավիճակի յուրահատուկ ֆոնին:

Հետազոտության նպատակին հասնելու համար հիմնականում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների հիմնական բաղադրիչների խորքային իրավական նշանակությունն ու էությունը,
- հետազոտել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրական ամրագրման նախադրյալներն ու պատճառները՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների տրամաբանության համատեքստում,
- ժամանակակից իրավաընկալման պայմաններում հետազոտել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների ինտերպրետացիան և գործառութային դերակատարությունն իրավունքի տարբեր ճյուղերում,
- վերլուծել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահիրավական բովանդակությունն ու նշանակությունը՝ սահմանադրական և իրավական այլ սկզբունքների ու դրույթների հետ հարաբերակցության խորապատկերում,
- սահմանադրահիրավական կարգավորումների արդիականացման պայմաններում, Հայաստանի Հանրապետության օրինակով, հետազոտել իրավական սկզբունքների սահմանադրականացման հնարավորությունները՝ որպես իրավական համակարգի զարգացման և կատարելագործման վրա ազդող գործոն,
- սահմանադրահիրավական և միջազգային իրավական հետազոտության ու պրակտիկայի վերլուծության հիման վրա վեր հանել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների ամրագրման և կիրառման առնչությամբ այլ երկրների փորձն ու եվրոպական իրավական չափորոշիչները, այդ երկրներում իրավական սկզբունքների սահմանադրականացման կառուցակարգերի ներդրման հիմնախնդիրները և արդի միտումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտ են հանդիսանում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման առանձնահատկությունները և դրա արդյունքում ձեռք բերած սահմանադրական կարգավիճակի հետևանքները հայրենական իրավական համակարգում:

Հետազոտության առարկան են կազմում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրական ամրագրման նախադրյալները, սահմանադրահիրավական բովանդակությունն ու նշանակությունը, դրա դրսևորման ձևերը, իրավական սկզբունքների սահմանադրականացման կառուցակարգերը, դրանց միջոցով իրավական համակարգերի զարգացման հայեցակարգերի ձևավորման արդի միտումները, միջազգային իրավական ակտերը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերակատարությունը նշված բնագավառում:

Հետազոտության տեսական և նորմատիվ հիմքերը: Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների, դրանց սահմանադրականացման և գոյություն ունեցող եվրոպական իրավական չափորոշիչների վերաբերյալ միասնական և համալիր վերլուծություններ և ուսումնասիրություններ գրեթե չեն իրականացվել, բայցևայնպես,

թեմայի առանձին բաղադրատարրերին և դրանց իրավական հիմնախնդիրներին անդրադարձ են կատարվել հայրենական և արտասահմանյան հեղինակների՝ Վ.Ն.Կուդրյավցեվի, Ա.Է.Ժալինսկու, Տ.Ն.Ռադկոյի, Գ.Գ.Հարությունյանի, Հ.Ռադթքեի, Վ.Մ.Սիրիխի, Լ.Ա.Մորոզովայի, Ա.Հ.Խաչատրյանի, Ս.Ի.Կուրգանովի, Զ.Ա.Սանդերսի, Ռ.Ե.Գուդինի, Օ.Ե.Կուտաֆինի, Մ.Ն.Մարչենկոյի, Մ.Տրոպերի, Ե.Մ.Դերյաբինայի, Գ.Բ.Դանիելյանի, Ա.Վ.Բրիլլիանտովի, Վ.Պողոսյանի, Վ.Ն.Խռոպանյուկի, Կ.Ա.Չերնովի, Ն.Դ.Սերգիևսկու, Ն.Ա.Այվազյանի, Ս.Ա.Բելոուսովի, Ա.Ա.Մանասյանի, Ա.Ն.Կոկոտովի, Հ.Մ.Խաչիկյանի և այլոց աշխատություններում:

Ատենախոսությունում ուսումնասիրվել են նաև անտիկ, միջնադարյան և հետմիջնադարյան ժամանակաշրջանների համաշխարհային հռչակ ունեցող մի շարք մտածողների՝ Հեգելի, Կանտի, Պյութագորասի, Պլատոնի, Արիստոտելի, Մխիթար Գոշի, Բեկկարիայի, Բենթամի, Ֆոյերբախի, Գրիգոր Տաթևացու, Թոմազո Կամպանելայի և այլոց աշխատությունները:

Հետազոտության համար նորմատիվային հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ՀՀ օրենքները, Սահմանադրական դատարանի որոշումները, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները, արտասահմանյան երկրների սահմանադրությունները:

Ժամանակակից հայրենական գիտության մեջ և պրակտիկայում դեռևս չի ձևավորվել իրավական սկզբունքների սահմանադրականացման գործընթացի մեթոդաբանության հստակ և ամբողջական հայեցակարգ:

Միևնույն ժամանակ, սահմանադրական իրավունքի գիտության մեջ բավարար ուշադրություն չի դարձվել ճյուղային իրավունքի դրույթների և սկզբունքների դերի և կարևորության բարձրացմանը զուգընթաց դրանց սահմանադրականացման անհրաժեշտության հիմնախնդիրներին:

Հետազոտության հիմնախնդիրների արդիականությունն ու ոչ բավարար ուսումնասիրվածությունը, և դրանց գործնական նշանակությունը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի զարգացման համար՝ ուղենշում են հետագա տեսական հետազոտությունների անհրաժեշտության շարունակականությունը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես գիտական ուսումնասիրության տրամաբանական, պատմական, ընդհանրացման, ինդուկտիվ, դեդուկտիվ, անալիզի, սինթեզի մեթոդները, այնպես էլ մի շարք մասնավոր մեթոդներ՝ համակարգակառուցվածքային, պատմական-իրավական, ինչպես նաև իրավահամեմատական վերլուծության ու համադրման: Նշված մեթոդների համակցված կիրառությունը հնարավորություն է տվել բացահայտել հետազոտության շրջանակներում կիրառվող հիմնական հասկացությունների բովանդակությունն ու առանձնահատկությունները, վեր հանել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման և սահմանադրական կարգավիճակի առնչությամբ առկա խնդրահարույց հարցադրումները և առաջարկել այդ հիմնահարցերի լուծման մոտեցումներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում առաջին անգամ իրավագիտական համալիր վերլուծության առարկա են դարձվում մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքները, դրանց սահմանադրականացման հիմնախնդիրները և եվրոպական իրավական չափորոշիչները:

Ատենախոսությունը՝ սահմանադրական ժամանակակից կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների վերլուծության արդյունքներով՝ որպես սահմանադրական սկզբունքներ հայրենական իրավական համակարգում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրաիրավական նշանակության բացահայտման հիմնախնդիրների և սահմանադրականացման հայեցակարգերի մշակման մոտեցումների համալիր հետազոտություն է, որի արդյունքների հիման վրա արվել են կոնկրետ առաջարկություններ:

Աշխատանքի ընթացքում վերլուծվել են հայրենական սահմանադրական կարգավորումները 2015 թվականից առաջ և հետո, մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի սահմանադրականացման անհրաժեշտությունն ու ստեղծված նախադրյալները, և դրա արդյունքում պետության իրավական համակարգի զարգացման միտումները:

Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել են նաև թեմայի առնչությամբ գոյություն ունեցող միաձազգային փորձը կամ դրա մասնակի դրսևորումները, որոնք համադրվել են հայրենական սահմանադրական կարգավորումների և օրենսրական կառուցվածքի հետ, ինչի կապակցությամբ արվել են հետևություններ և դատողություններ:

Ատենախոսության գիտական նորույթն առաջին հերթին արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ ամփոփված մի շարք տեսական մտահանգումներում և գործնական առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Ելնելով առաջադրված նպատակներից և դրանցից հետևող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Բացահայտվելով «մեղք» և «պատիժ» հասկացությունների՝ իբրև իրավական հասկացությունների ծագումնաբանությունը և պատմական զարգացումը, առաջ են քաշվել «մեղք» և «պատիժ» հասկացությունների ձևավորման և զարգացման պատմաիրավական առանձին հետևյալ փուլերը.

ա) մարդկային (անձնամիջյան) գիտակցական փոխհարաբերությունների առաջացման ժամանակաշրջան,

բ) մարդու համար որոշակի վարքագծի կանոնների սահմանման ժամանակաշրջան,

գ) առանձին հասարակական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջան,

դ) սովորութային իրավունքից ավելի շատ նորմատիվային իրավունքի անցման ժամանակաշրջան,

ե) սովորութային և նորմատիվային իրավունքում դրանց էության արտացոլման ժամանակաշրջան,

զ) նորմատիվային կոնկրետ ակտերում ամրագրման ժամանակաշրջան,

է) իրավական համակարգի ատիճանակարգության մեջ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերում (սահմանադրություններ, միջազգային իրավական փաստաթղթեր) արտացոլման գործընթացների ժամանակաշրջան:

2. Ատենախոսությամբ կատարված ուսումնասիրությամբ բացահայտվել է մեղքի և պատժի համաչափության սկզբունքների բաղկացուցիչ տարրերի խորքային իրավական նշանակությունը և լայնիմաստ ընկալման հնարավորությունն ու անհրաժեշտությունը, ինչպես նաև կարևորելով պետության դերը «մեղք»-ի սահմանման, որոշման և դրա հիմքով պատժի նախատեսման հարցում՝ առաջարկվել է իրավաբանական տեսական

գրականության մեջ տալ «մեղք» հասկացության այլ՝ ավելի լայն սահմանում, քան այդ հասկացության վերաբերյալ հաճախ հանդիպող սահմանումները, այն է՝ «Մեղքն անձի հոգեբանական և պետության իրավական վերաբերմունքն ու ընկալումն է անձի կողմից իրականացված արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ, ինչպես նաև նրա պատժի հիմքը և այդ պատժի չափի (պատժաչափի) կանխորոշիչ տարրը»:

3. Հետազոտելով մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունն ու պատճառները՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի զարգացման տրամաբանության համատեքստում՝ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի սահմանադրականացումը հիմնականում ունեցել է հետևյալ նախադրյալները.

ա) երկրում սահմանադրականության խորացման հրամայականը,

բ) սահմանադրական կամ ընդհանուր իրավական համակարգի զարգացումը,

գ) օրենսդրության կատարելագործումը, դրանց միջոցով մի շարք հնարավոր իրավական խնդիրների լուծումը,

դ) պետության իրավական համակարգի առանձնահատկությունները,

ե) մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին միտված ամուր երաշխիքների ամրագրման անհրաժեշտությունը:

4. Կարևորելով մեղքի և պատժի համաչափության սկզբունքների առնչությամբ առկա իրավական որոշակի կառուցակարգերի գործառնական նշանակությունը և վեր հանելով քննարկվող սկզբունքների ինտերպրետացիայի (ավելի լայն մեկնաբանության) և իրավաընկալման հիմնահարցերը, ատենախոսությամբ բացահայտվել է մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահիրավական բովանդակությունը, ըստ որի՝ մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը կարելի է ընկալել որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը միտված քրեահիրավական արմատներ ունեցող սահմանադրական սկզբունքներ, որոնք հաճախ փոխպայմանավորվում են սահմանադրական այլս սկզբունքների և ազատությունների հետ և, արդեն իսկ սահմանադրական ամրագրման պայմաններում, կարող են տարածել իրենց կիրառության շրջանակները՝ ոչ միայն քրեական, այլ նաև իրավունքի այլ ճյուղերի վրա:

5. Սահմանադրահիրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքներով հիմնավոր է համարվել այն գաղափարը, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքները պետք է հանդիսանան մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պահմանման և կենսագործման համար իրական և, իրենց տեղում՝ լիարժեք սահմանադրական երաշխիք և օրենսդրորեն պատշաճ արտացոլվելու, օրենսդրության մշակման ու կատարելագործման, ինչպես նաև իրավական համակարգերում առկա այս կամ այն խնդրի լուծման հրամայականով պայմանավորված՝ կարող են հանգեցնել նոր օրենսդրական կառուցակարգերի ձևավորմանը, իրավական այլ նորմերի կամ սկզբունքների սահմանադրականացմանը:

6. Կարևորելով հետազոտման առարկա հիմնախնդրի առնչությամբ միջազգային փորձը, աշխարհի մի շարք երկրների իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկան, իրականացվելով որոշակի համեմատական վերլուծություն, արդյունքում փաստելով, որ բացի Հայաստանի Հանրապետությունից, աշխարհի որևէ այլ պետությունում խնդրո քննարկման առարկա մեղքի և պատժի համաչափության սկզբունքները չունեն սահմանադրական ամրագրում՝ վեր են հանվել այդ երկրներում իրավական սկզբունքների

սահմանադրականացման կառուցակարգերի ներդրման հիմնախնդիրները և արդի միտումները, ի հայտ են բերվել թեմային առնչվող մի քանի եվրոպական իրավական հետևյալ չափորոշիչները.

ա) անձին կարելի է քրեական պատասխանատվության ենթարկել միայն արարքը համապատասխան իրավական ակտով նախատեսված լինելու պայմաններում,

բ) մեղքը՝ արարքի կատարման պահով փոխպայմանավորելը,

գ) թույլ տրված հակահրավական արարքի և պատժի միջև համաչափության ապահովման պարտադիրությունը,

դ) պահպանելով պատժի համաչափությունը՝ հնարավորինս անազատության հետ չկապված պատիժների կիրառմանը ձգտելը,

ե) ի սկզբանե հակահրավական արարքը դասակարգելիս՝ բուն իրավախախտման բնույթը բացահայտելու և, դրա հիմքով, համապատասխան իրավական ակտով նախատեսելու անհրաժեշտությունը:

7. Ատենախոսությամբ հիմնավորվել է հետևյալ դիրքորոշումը, որ օրենսդրական (քրեահրավական, վարչահրավական և այլն) քաղաքականության մշակման համատեքստում անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել սահմանադրահրավական դրույթների թիրախային և օգտակար ազդեցության ապահովման կարևորությունը, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել օրենսդրության մասնակի նոր մոդելի մշակման: Մասնավորապես՝ որպես ընդհանուր վերլուծությունից բխող և օրենսդրական անհրաժեշտ կառուցակարգերի և միջազգային որոշակի փորձի ներդրման օրինակ, առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքում կատարել մի շարք փոփոխություններ, որոնք պետք է միտված լինեն ավելի «նեղացնելու», հնարավորինս հստակեցնելու քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ արարքների համար սահմանված պատժաչափերը, այնպես, որ դրանք լինեն ավելի համահունչ (համաչափ) կատարված հանցանքի հետ, ինչի արդյունքում կչեզոքանան իրավակիրառ պրակտիկայում հնարավոր կամայականությունները: Այսինքն, մեր կողմից առաջարկվող օրենսդրական քաղաքականության նոր մոդելի մշակումը պետք է միտված լինի մեղքով դրսևորված յուրաքանչյուր արարքի համար օրենսդրական մակարդակում հնարավորինս հստակ սանկցիայի նախատեսմանը, ինչը չի վերաբերում միայն քրեահրավական ոլորտին:

Հեղինակի կողմից արված վերոնշյալ առաջարկի կյանքի կոչման պարագայում կստեղծվի մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների պահպանման ևս մեկ կարևոր իրավական երաշխիք:

8. Ատենախոսությամբ հիմնավորվել է այն գաղափարը, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքները բնութագրվում են մի շարք հատկանիշների ու բնութագրիչների ամբողջությամբ և նշանակությամբ: Մասնավորապես դրանք են.

ա) սահմանադրական բնույթը և այդ առումով՝ եզակիությունը,

բ) տարածական մեկնաբանվելու հատկությունը,

գ) համապարտադիրությունը,

դ) հանրային բնույթը,

ե) մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանն ուղղակիորեն միտված լինելը,

զ) փոխկապվածությունը,

է) միմյանցով փոխպայմանավորված լինելը:

Ատենախոսության գիտատեսական ու գործնական նշանակությունը: Կատարված հետազոտության գիտատեսական և գործնական նշանակությունն ամենից առաջ կարևորվում է նրանով, որ այն մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման, վեր հանված խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ համակողմանի աշխատություն է, որը կարող է հիմք դառնալ հետագա գիտական հետազոտությունների համար և օգտագործվել ուսումնական դասընթացներում: Աշխատությունում կատարված վերլուծությունների արդյունքում արված եզրահանգումները կարող են օգտագործվել «Սահմանադրական իրավունք», «Մարդու իրավունքների հիմնախնդիրները», «Քրեական իրավունք», «Եվրոպական իրավունք» դասընթացներում ու հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է այս հետազոտության առարկայի հետ:

Ատենախոսության գործնական նշանակությունը դրսևորվում է նրանում, որ ներկայացված առաջարկները և եզրահանգումները կարող են կյանքի կոչվել իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում, ինչը կնպաստի սահմանադրականության հենքի վրա ՀՀ օրենսդրության կատարելագործմանը:

Միաժամանակ, առկա հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց կապակցությամբ բերված հիմնավորումները կարող են նպաստել նաև կրթական, մեթոդական ու գիտագործնական նյութերի և գրականության մշակմանն ու նախընտրելի իրավական մշակույթի ձևավորմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում: Հեղինակը ատենախոսության հիմնական մասերի շարադրման ընթացքում մշտապես կապ է պահպանել իր գիտական ղեկավարի, ինչպես նաև ամբիոնի անդամների հետ, և տարբեր առանցքային դրույթներ ատենախոսության մեջ ամրագրվել են նախապես համաձայնեցնելուց հետո: Բացի այդ, հեղինակը գործնական քննարկումներ է ունեցել ՀՀ դատավորների և նրանց օգնականների, փաստաբանների, սահմանադրագետների և այլոց հետ:

Ատենախոսության էությունն արտացոլող գաղափարների շուրջ հեղինակը հանդես է եկել գիտական ելույթներով, և դրանք արտացոլվել են տպագրված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 8 ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության

ներկայացվող հիմնական դրույթները, արտացոլվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների, դրանց բաղադրատարրերի էությունը և պատմահրավական ակունքները»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից:

««Մեղք» և «պատիժ» հասկացությունների ձևավորման պատմահրավական արմատները. պատմափիլիսոփայական զարգացում» վերտառությամբ առաջին ենթագլխում հեղինակն անդրադարձել է «մեղք» և «պատիժ» հասկացությունների ձևավորման և հայրենական ու արտասահմանյան իրավական մտքի էջերում դրանց պատմահրավական և պատմափիլիսոփայական զարգացման առանձնահատկություններին, ինչի արդյունքում բացահայտվել են նշված հասկացությունների պատմահրավական զարգացման առանձին շրջափուլեր:

«Մեղքի սկզբունքի հիմնական բաղադրիչի իրավական բովանդակության բացահայտման հիմնահարցերը սահմանադրական և քրեական իրավունքների հարաբերակցության խորապատկերում» վերտառությամբ երկրորդ ենթագլխում սահմանադրական ու քրեական իրավակարգավորումների հարաբերակցության լույսի ներքո հանգամանորեն անդրադարձ է կատարվել մեղքի սկզբունքի սահմանադրահրավական էությանը, տրվել է «մեղք» հասկացության նոր՝ ամբողջական սահմանում:

«Պատժի համաչափության սկզբունքի սահմանադրահրավական բնույթն ու էությունը իրավական համակարգի զարգացման և սահմանադրականացման դիտանկյունից» վերտառությամբ երրորդ ենթագլխում հեղինակը բացահայտել են պատժի համաչափության սկզբունքի պահպանության սահմանադրահրավական երաշխիքները, ինչպես նաև մեղքի սկզբունքի հետ միասին օրենսդրության զարգացմանը նպաստելու առաքելությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահրավական բովանդակությունը»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահրավական ամրագրման նախադրյալները Սահմանադրության զարգացման և կայունության համատեքստում» վերտառությամբ առաջին ենթագլխում բացահայտվել են քննարկվող սկզբունքների սահմանադրական ամրագրման հիմնական պատճառներն ու պայմանները, ինչպես նաև սահմանադրականացման գործընթացի արդյունքում երկրի իրավական համակարգի վրա ազդեցության հետևանքները:

«Մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների ինտերպրետացիայի ու իրավաընկալման հիմնահարցերը քրեական և վարչական իրավունքներում» վերտառությամբ երկրորդ ենթագլխում հետազոտվել են քրեական իրավունքում և վարչական իրավունքում խնդրո քննարկման առարկա սկզբունքների իրավական նշանակության բացահայտման և իրավաընկալման հիմնահարցերը, քննարկվող իրավական սկզբունքների իրավաընկալման կախվածությունը ինտերպրետցիայի (մեկնաբանության) արդյունքներից:

«Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահրավական դերն ու նշանակությունը, հարաբերակցությունը սահմանադրահրավական այլ սկզբունքների հետ» վերտառությամբ երրորդ ենթագլխում վերլուծության է ենթարկվել

մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի տեղը սահմանադրահիրավական նոր կարգավորումների համայնապատկերում, ինչպես նաև ուսումնասիրության է ենթարկվել սահմանադրահիրավական այլ սկզբունքների հետ հարաբերակցության ընդհանուր գծերը և սահմանադրության զարգացման տեսանկյունից դրա կարևորությունը: Բացահայտվել է քննարկվող սկզբունքների սահմանադրահիրավական բովանդակությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների եվրոպական իրավական չափորոշիչները. Միջազգային փորձ»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլուխներից:

«Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների կենսագործման եվրոպական իրավական չափորոշիչները» վերտառությամբ առաջին ենթագլխում հետազոտվել են եվրոպական կառույցների կողմից մեղքի և պատժի համաչափության սկզբունքներին այս կամ այն կերպ առնչվող մի շարք իրավական փաստթղթեր և իրավակարգավորումներ, տրվել են քննարկվող սկզբունքներին հատուկ առանձին եվրոպական իրավական չափորոշիչներ:

«Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների դրսևորման և կիրառման միջազգային փորձը, իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկան. համեմատական վերլուծություն» վերտառությամբ երկրորդ ենթագլխում ուսումնասիրության են ենթարկվել մի շարք երկրների սահմանադրությունները, նրանց կողմից տարվող սահմանադրահիրավական քաղաքականության մշակման առանձնահատկությունները և միտումները: Իրականացվել է համեմատական տեսահիրավական վերլուծություն: Ուսումնասիրվել է քննարկվող իրավական սկզբունքների առկայությունն այլ երկրների հիմնական օրենքներում, ինչպես նաև վեր են հանվել մի շարք սահմանադրական նորմեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են նշված սկզբունքներին:

Եզրակացության մեջ ամփոփ տրվել են հետազոտության արդյունքների հիման վրա մշակված եզրահանգումներ, որոնք ներկայացվում են ստորև.

Ամփոփելով հետազոտության արդյունքները, թերևս, նպատակահարմար է առանձնացնել հետևյալ եզրահանգումները և առաջարկությունները.

1. Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահիրավական նշանակության ամբողջական ընկալման համար պետք է բացահայտվի վերջիններիս հիմնաքարային բաղադրիչների՝ «մեղք»-ի և «պատիժ»-ի ծագումնաբանությունը: Պարտադիր կերպով պետք է լույս գցել մարդկության պատմության մեջ այս երկու երևույթների այն կարևոր դերակատարության վրա, որի շնորհիվ ապահովվել է մարդկային փոխհարաբերությունների կանոնակարգման անընդմեջ զարգացումը: Առավելապես, անհրաժեշտ է սևեռվել դրանց կողմից իրավական նշանակության ձեռք բերման պատմական ակունքների բացահայտման վրա: Վերլուծությունների արդյունքում պարզ է դարձել, որ, մեծ հաշվով, նշված երկու հասկացությունները ծագել են իրավունքի ծագման հետ միաժամանակ, մասնավորապես այն ժամանակ, երբ մարդկային մտքին հասու է դարձել «արգելված»-ի գաղափարը: Այս երկու հասկացություններն իրենց իրավական նշանակությամբ անցել են պատմահրավական և պատմափիլիսոփայական զարգացման մի շարք փուլեր՝ իրավունքի զարգացմանը զուգընթաց:

Մարդկության պատմության մեջ նշված հասկացություններն իրենց ուրույն տեղն են գտել դեռևս այն ժամանակներից, երբ սկսել են ձևավորվել և որոշակիորեն կանոնակարգվել մարդկային նվազագույն փոխհարաբերությունները:

2. Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների հիմնական բաղադրատարրերը պետք է մեկնաբանվեն և սահմանվեն այնպես, որ հնարավորինս արտահայտեն իրենց իրավաբանական նշանակությունը և համապատասխանեն իրենց բուն էությանը: Համեմատական վերլուծությունների արդյունքում **հիմնավորվել է**, որ գրականության մեջ գերակայում է «մեղք»-ի այն սահմանումը, որը հիմնված է հոգեբանական տեսության վրա, որը, մեր համոզմամբ, առնվազն թերի է: Նման մոտեցումը սահմանափակում է այդ հասկացության ամբողջական պատկերի և իմաստի ընկալման հնարավորությունը: **Հիմնավորվել է** նաև, որ գիտատեսական հարթությունում կարող են առաջ քաշվել «մեղք»-ի նոր տեսություններ: Տեսական գրականության մեջ տրվող սահմանումները հնարավորինս պետք է արտացոլեն կոնկրետ երևույթի ողջ էությունը: Տվյալ դեպքում, «մեղք» հասկացությունն առավել ընդգրկուն կերպով սահմանելը կնպաստի մեղքի սահմանադրական սկզբունքի իմաստի ավելի ճիշտ ընկալմանը:

3. Բացահայտվել են 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների համատեքստում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հնարավոր հիմքերն ու պատճառները, որոնք, այնուամենայնիվ, հետագա հետազոտությունների ընթացքում կարող են լրացվել:

Բացի այդ կարող ենք պնդել, որ *Իրավական սկզբունքների՝ իրավական նշանակությամբ պայմանավորված սահմանադրականացումը մի կողմից պարարտ հող է նախապատրաստում իրավական և ժողովրդավարական պետության կայացման համար, մյուս կողմից, հենց իրավական և ժողովրդավարական պետական համակարգերի կայացման մարտահրավերներն են նախադրյալ հանդիսանում հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների երաշխավորման և այդ հարաբերությունների սահմանադրականացման համար:* Առավել ևս, եթե իրավական սկզբունքն օժտված է ***մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործառույթով,*** ապա, նման պարագայում, սահմանադրականացումը հանդիսանում է յուրատեսակ միջոց, այդ սկզբունքներին հաղորդելով սահմանադրահիրավական երաշխիք, իրավական և ժողովրդավարական պետության կերտման գործում:

Հետազոտության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ իրավական սկզբունքների սահմանադրականացման նախադրյալների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք, երբեմն, միաժամանակ հանդիսանում են սահմանադրականացման գործընթացի համար և՛ անհրաժեշտ պատճառ, և՛ սպասվելիք հետևանք:

4. Հետազոտությամբ հիմնավորվել է, որ ***իրավական համակարգերում առկա մի շարք խնդիրների լուծման գործընթացներով և, առհասարակ, իրավունքի և օրենսդրության մշակման ու կատարելագործման մարտահրավերների դիմագրավման հրամայականով պայմանավորված, ժամանակ առ ժամանակ հարկավոր է նախաձեռնել և իրականացնել իրավական նորմերի կամ սկզբունքների՝ հիմնական օրենքում ամրագրելու գործընթաց:***

Արձանագրվել է, որ Հայաստանի Հանրապետությունում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացումը հիմք է օրենսդրության զարգացման և իրավական համակարգում հնարավոր խնդիրների լուծման համար:

5. Ատենախոսության արդյունքներով հիմնավորվել է, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահիրավական էությունը, ի թիվս այլնի,

զետեղվելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին նվիրված գլխում, միտված է ***մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, հատկապես՝ մարդու անօտարելի և անքակտելի իրավունքների: Իսկ անհրաժեշտ օրենսդրական կառուցակարգերի ներդրման արդյունքում խնդրո քննարկման առարկա սահմանադրական սկզբունքները կհանդիսանան նշված իրավունքների պաշտպանությանն ուղղված առավել արդյունավետ սահմանադրական երաշխիք:***

Մարդու կենսական շահերի տեսանկյունից քննարկվող սկզբունքների պահպանության համար առկա սահմանադրական երաշխիքն այնքան կարևոր է, որ այն չի կարող չեզոքանալ, անգամ, երկրում արտակարգ և ռազմական դրության պայմաններում:

6. ***Հետազոտության արդյունքներով հանգել ենք այն մտքին, որ իր էությամբ ու նշանակությամբ յուրաքանչյուր նախաձեռնվող սահմանադրական փոփոխություն չէ, որ կարող է դիտարկվել իբրև սահմանադրական զարգացման միտում:*** Սահմանադրական որևէ փոփոխություն չպետք է լինի ինքնանպատակ, հակառակ դեպքում, առաջնահերթ, կվտանգվի երկրի սահմանադրական կարգը: Անհրաժեշտ է բացառել որևէ սահմանադրական փոփոխության հիմքում քաղաքական շարժառիթների առկայությունը: Անթույլատրելի է սահմանադրական փոփոխությունները ծառայեցնել քաղաքական շահերի սպասարկման համար: Ասվածը վերաբերում է նաև արդեն իսկ սահմանադրական ամրագրում ունեցող դրույթների, այդ թվում՝ իրավական սկզբունքների տարաբնույթ խեղաթյուրված ինտերպրետացիաների միջոցով այս կամ այն խնդրի հանգուցալուծմանը:

7. Հետազոտության արդյունքներով հանգել ենք այն համոզման, որ ***խնդրո քննարկամ առարկա երկու սկզբունքների՝ սահմանադրական մակարդակով նույն հոդվածում ամրագրելու նպատակը, վերջիններիս սերտ կապը և միմյանցով մշտապես փոխպայմանավորված լինելու հանգամանքը հնարավորինս շեշտադրելն է:*** Գտնում ենք, որ ***մայր օրենքի մեկ հոդվածում դրանց միասնական կերպով ամրագրումը տեսականորեն կբացառի մեղքի և պատժի համաչափության գաղափարների միմյանցից անջատումը՝ օրենսդրական մակարդակում դրանց առնչվող նյութական և դատավարական նորմեր սահմանելիս:***

8. Ատենախոսությամբ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվել է, որ ***Հայաստանի Հանրապետության ներպետական իրավունքում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրական ամրագրման իրողությամբ պայմանավորված, վերջիններս ստանում են ավելի տարածական բնույթ: Սահմանադրությամբ սահմանված լինելու պայմաններում՝ բացի քրեաիրավական բնույթի իրավահարաբերություններից, դրանց իմաստն ու բովանդակությունը կարելի է տարածել նաև իրավունքի այլ ճյուղերի նորմերով կարգավորվող, սակայն իրենց էությամբ համանման հասարակական հարաբերությունների վրա:***

Ատենախոսությամբ հիմնավորվել է, որ սահմանադրական ամրագրման արդյունքում բարձրացել է քննարկվող սկզբունքների գործառույթների ազդեցությունը իրավունքի բոլոր ճյուղերի վրա:

Բացահայտվել է իրավական սկզբունքների՝ իրավունքի տարբեր ճյուղերի ընդհանուր կարգավորումների համատեքստում՝ մեկնաբանվելու և այդ ճյուղերում տեղայնացվելու հատկությունը, որի համայնապատկերում ***սահմանադրականացումն ինքնին կարող է հանդես գալ որպես յուրօրինակ հնարավորություն քննարկվող սկզբունքներն ավելի տարածական մեկնաբանելու համար, ինչի արդյունքում դրանք ձեռք կբերեն ավելի մեծ***

ազդեցություն ներպետական իրավունքի տարբեր ճյուղերում՝ առավել հուսալի կերպով երաշխավորելով այդ իրավահարաբերություններում մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները:

9. Իրականացված վերլուծությունների արդյունքում **հիմնավորվել է** Սահմանադրական դատարանի կարևոր դերը՝ սահմանադրական սկզբունքների էության բացահայտման հարցում: Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահված լիազորություններն իրականացնելիս Սահմանադրական դատարանը կարող է անել այնպիսի մեկնաբանություններ և հայտնել այնպիսի իրավական դիրքորոշումներ, որոնք մեծ արժեք կունենան սահմանադրական այս կամ այն դրույթի սահմանադրաիրավական իմաստի և բովանդակության վերհանման համար, ***արդյունքում քննարկվող սկզբունքների ավելի տարածական ինտերպրետացիայի տեսական հնարավորությունը գործնականում կդառնա ավելի առարկայական: Սահմանադրական արդարադատության իրականացման ընթացքում, քննարկման առարկա սկզբունքներին առնչվող հնարավոր իրավական դիրքորոշումների արդյունքում կստեղծվի նաև դրանց իրավաընկալման ավելի լայն դաշտ:***

10. Կատարված հետազոտությամբ բացահայտվել են մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրաիրավական դերն ու նշանակությունը: Համեմատական վերլուծություններ են իրականացվել ***Սահմանադրության 40-րդ հոդվածով սահմանված՝ ազատ տեղաշարժվելու իրավունքին, 63-րդ հոդվածով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքին, 68-րդ հոդվածով սահմանված՝ կրկին դատվելու արգելքին, 72-րդ հոդվածով սահմանված՝ հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքին, 73-րդ հոդվածով սահմանված՝ օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժին, 78-րդ հոդվածով սահմանված՝ համաչափության սկզբունքին, 79-րդ հոդվածով սահմանված՝ որոշակիության (իրավական որոշակիության) սկզբունքին*** նվիրված սահմանադրական կարգավորումների, ինչպես նաև ***ըստ մեղքի պատասխանատվության ընդհանուր իրավական սկզբունքի խորապատկերում:***

Այդպիսով վեր է հանվել խնդրո քննարկամ առարկա սահմանադրական սկզբունքների դերը սահմանադրաիրավական այլ սկզբունքների և իրավունքների հետ փոխհարաբերություններում:

Ուսումնասիրությունների արդյունքում եկել ենք այն համոզման, որ սահմանադրական մի շարք սկզբունքների ամբողջության մեջ քննարկման առարկա սկզբունքները չունեն մեկուսացած դիրք: Դրանց խախտման յուրաքանչյուր դրսևորում իր ազդեցությունն է թողնում շատ թե քիչ փոխկապակցված այլ սկզբունքների վրա: **Ապացուցվել է**, որ խնդրո քննարկման առարկա սկզբունքների խախտումը կհանգեցնի անձի մի շարք, այդ թվում՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների, ազատությունների և սկզբունքների խախտման:

Վերոնշյալի համատեքստում **ևս հիմնավորվել է**, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքները՝ իբրև սահմանադրական սկզբունքներ, ***միտված են նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պահմանմանը և կենսագործմանը:***

Ընդգծվել են Սահմանադրության 71-րդ հոդվածի տեղն ու դերը սահմանադրական կայունության տեսանկյունից, մատնանշելով սահմանադրական երաշխիքն առ այն, որ **նշված հոդվածը կարող է փոփոխության ենթարկվել միմիայն հանրաքվեի միջոցով:**

11. Գիտական հետազոտության ընթացքում վեր հանված մեղքի և պատժի համաչափության սկզբունքներին վերաբերող եվրոպական իրավական չափորոշիչների կապակցությամբ մատնանշվել և քննարկվող սկզբունքների համատեքստում վեր են լուծվել մի շարք եվրոպական իրավական փաստաթղթեր ու դատական ակտեր և արվել են համապատասխան հետևություններ:

Մասնավորապես, եվրոպական իրավական չափորոշիչների ձևավորման մեջ հսկայական ներդրում ունեցող **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի** ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն հետևության, որ Դատարանի կողմից հակաիրավական արարքի քրեաիրավական բնույթի լինելը կամ չլինելը որոշելիս՝ ոչ միայն հաշվի է առնվում իրավախախտման իրավական դասակարգումը ներպետական օրենսդրությունում, այլ նաև ***իրավախախտման բուն էությունը և հնարավոր պատժի խստության աստիճանի համապատասխանությունը դրան:***

Տարվող քրեաիրավական քաղաքականության առումով, *եվրոպական իրավական չափորոշիչների տրամաբանությունը ոչ մեծ հանրային վտանգավորություն ունեցող արարքների պարագայում, հնարավորինս, ազատազրկման հետ չկապված պատժատեսակների տարածական կիրառմանը միտված լինելը պայմանավորված է պատժի համաչափության պահպանման և, միևնույն ժամանակ, մարդու իրավունքների և ազատությունների հնարավոր անտեղի սահմանափակման ռիսկերի նվազեցման անհրաժեշտությամբ:*

12. Հետազոտության ընթացքում աշխարհի տարբեր երկրների, այդ թվում Գերմանիայի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի, Բրազիլիայի, Ավստրալիայի և մի շարք այլ երկրների սահմանադրաիրավական համակարգերի, ինչպես նաև քննարկման առարկա սահմանադրական սկզբունքներին առնչվող իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի և մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունների արդյունքում ***փաստվել է, որ, բացի Հայաստանի Հանրապետությունից, աշխարհի որևէ այլ պետությունում խնդրո քննարկման առարկա մեղքի և պատժի համաչափության սկզբունքները չունեն սահմանադրական ամրագրում:***

Տարբեր երկրներում իրավական սկզբունքների սահմանադրականացման կառուցակարգերի ներդրման և զարգացման համար արժեքավոր փորձ կարող են դառնալ մեր երկրում տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում քննարվող սկզբունքների սահմանադրականացման փաստը, ինչպես նաև՝ այդ սկզբունքներին ու դրանց սահմանադրականացմանը նվիրված այս աշխատությամբ կատարված հետազոտության արդյունքներն ու դատողությունները:

13. Գործնականում մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների ակտիվ կենսագործման, դրա արդյունքում մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանությանն ուղղված երաշխիքների բարձրացման դիտանկյունից, **առաջարկված** օրենսդրական որոշակիորեն նոր մոդելի մշակումը՝ հանգեցնելով իրավակիրառ պրակտիկայում հնարավոր կամայականությունների մասնակի չեզոքացմանը, գործնականում կհանգեցնի նաև այդ մասով օրենքի միատեսակ կիրառության սկզբունքի առավել պահպանմանը:

14. Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրաիրավական ամբողջ ներուժի օգտագործման և իրավական համակարգի զարգացման անհրաժեշտության հրամայականով պայմանավորված, անհրաժեշտ է կատարել որոշակի

սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես՝ Սահմանադրության 71-րդ հոդվածի բովանդակությունը պետք է շարադրել հետևյալ կերպ՝

«1. Հանցանք կամ հակահիրավական որևէ արարք կատարած անձի պատժի կամ հարկադրանքի այլ միջոցի հիմքը նրա մեղքն է:

2. Օրենքով սահմանված պատիժը կամ հարկադրանքի այլ միջոցը, ինչպես նաև դրանց չափը և տեսակը պետք է համաչափ լինեն կատարված հանցանքին կամ հակահիրավական այլ արարքին»:

Այնուհետև, հավանական է կարիք լինի կատարել որոշ փոփոխություններ նաև ճյուղային օրենսդրությունում՝ մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրահիրավական նշանակության ամբողջական կիրառության նկատառումներով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Մեղքի և պատժի համաչափության սկզբունքները սահմանադրական կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համայնապատկերում (մենագրություն), Վարդանյան Վ.Ա..-Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021. 151 էջ:

2. Մեղքի էությունը և դրա իրավական բովանդակության բացահայտման հիմնահարցերը սահմանադրական իրավունքի և քրեական իրավունքի հարաբերակցության խորապատկերում, «Դատական իշխանություն» 2019թ. հուլիս-օգոստոս, էջեր 29-34:

3. Մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի սահմանադրահիրավական ամրագրման նախադրյալները, «Արդարադատություն» 2019թ. հուլիս 2/48, էջեր 20-24:

4. Մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների սահմանադրահիրավական բովանդակությունն ու նշանակությունը, հարաբերակցությունը սահմանադրահիրավական այլ սկզբունքների հետ, «Արդարադատություն» 2020թ. հոկտեմբեր 3/52, էջեր 36-42:

5. Մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների ինտերպրետացիայի և իրավաընկալման հիմնահարցերը քրեական և վարչական իրավունքում, «Օրինականություն» 2021թ. N 121, էջեր 36-41:

6. Մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքներին առնչվող եվրոպական չափորոշիչները, «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» 2021թ. 1 (5), էջեր 42-49:

7. Պատժի համաչափության սահմանադրական սկզբունքի էությունը իրավական համակարգի սահմանադրականացման և զարգացման դիտանկյունից, «Դատական իշխանություն» 2021թ. մարտ-ապրիլ, էջեր 71-80:

8. Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների իրավաարտահայտման միջազգային փորձը, իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկան. համեմատական վերլուծություն, «Արդարադատություն» 2021թ. հունիս 2/54, էջեր 6-13:

РЕЗЮМЕ

ВАРДАНЯН ВИРАБ АЛЬБЕРТОВИЧ

ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОНАЛИЗАЦИИ ПРИНЦИПОВ ВИНЫ И СОРАЗМЕРНОСТИ НАКАЗАНИЯ В КОНТЕКСТЕ НОВЫХ КОНСТИТУЦИОННЫХ РЕГУЛИРОВОК И ЕВРОПЕЙСКИХ ПРАВОВЫХ СТАНДАРТОВ

В результате внесения изменений в Конституцию Республики Армения принцип вины и принцип соразмерности наказания были закреплены в Конституции в одной статье. Другими словами, происходил процесс конституционализации правовых принципов.

Обладая фактом конституционного закрепления принципов вины и соразмерности наказания в результате новых конституционных изменений, в диссертации рассмотрены предпосылки конституционного закрепления принципов вины и соразмерности наказания. Выявлены причины и условия, послужившие основой для закрепления этих правовых принципов в основном законе страны.

В контексте целей и задач диссертации важная роль была отведена раскрытию конституционного смысла и содержания обсуждаемых правовых принципов. Дана четкая формулировка их конституционно-правового содержания. С точки зрения общего раскрытия конституционного значения принципов вины и соразмерности наказания выявился ряд особенностей, характеризующих эти принципы.

При этом для обеспечения полноты исследования и раскрытия полной конституционно-правовой сущности обсуждаемых правовых принципов были изучены понятия «вина» и «наказание», являющиеся основными составляющими обсуждаемых правовых принципов, также выдвигались отдельные этапы их историко-правового и историко-философского развития. Дано новое определение понятия «вина» как правовой категории.

В ходе исследования особое внимание было уделено существующему международному опыту по принципам вины и соразмерности наказания. Изучив конституции ряда стран мира, обнаружив отсутствие прямой фиксации в них изучаемых нами правовых принципов, была доказана уникальность существования такого явления в нашей стране. Выявив тенденции развития правовой системы ряда стран, был сделан вывод о том, что конституционализация упомянутых правовых принципов в нашем государстве, может быть примером конституционализации обсуждаемых нами правовых принципов или других правовых принципов в правовых системах других стран, а это исследование, посвящённое конституционализации обсуждаемых правовых принципов, в анологичных процессах может быть полезным материалом.

В рамках темы исследования был изучен ряд европейских правовых документов, а также некоторые правовые нормы, относящиеся к теме исследования. В результате были определены несколько европейских правовых стандартов, касающихся принципов вины и соразмерности наказания.

В результате исследования был сделан ряд выводов. Среди прочего, было обосновано также, что, кроме Республики Армения, обсуждаемые правовые принципы

прямо не закреплены в конституциях какой-либо другой страны мира. Выявлена тесная связь между принципами вины и соразмерностью наказания и другими конституционно-правовыми принципами и правами, а также обоснован факт неизбежности нарушения одного из них. В текст статьи 71 Конституции РА было предложено внести некоторые изменения, в результате которых расширится возможность интерпретации и применения обсуждаемых принципов в различных отраслях права. Обосновано, что не каждое изменение конституции можно рассматривать как тенденцию развития конституционно-правовой системы. Изучая конституционно-правовые нормы ряда развитых стран и правовые документы, созданные в результате деятельности ряда европейских институтов, мы пришли к выводу, что европейское право в контексте защиты основных прав и свобод человека имеет тенденцию внедрения и развития политики для применения штрафов, не связанные с лишением свободы за мелкие правонарушения или другие противоправные действия, при этом в этой работе выделилось соблюдение принципов вины и соразмерности наказания, особенно при наличии факта их конституционного закрепления в нашей стране.

В диссертации отмечен ряд существующих или возможных проблем в правовой системе, связанных с темой исследования, которые следует решать через новые законодательные структуры, при необходимости, через новые законодательные разработки. В связи с этим следует использовать конституционное закрепление обсуждаемых принципов и весь его потенциал, поскольку это дает им более широкую возможность локализовать их в разных отраслях права и применять их в разных сферах ответственности, а также дает более широкую возможность интерпретации и правового восприятия.

SUMMARY

VIRAB ALBERT VARDANYAN

PROBLEMS OF CONSTITUTIONALIZATION OF THE PRINCIPLES OF GUILT AND PROPORTIONALITY OF PUNISHMENT IN THE CONTEXT OF THE NEW CONSTITUTIONAL REGULATIONS AND EUROPEAN LEGAL STANDARTS

As a result of the constitutional amendments made in the Republic of Armenia, the principle of guilt և the principle of proportionality of punishment were enshrined in the Constitution under one article. In other words, there was a process of constitutionalization of legal principles.

Highlighting the fact of constitutional enshrinement of the principles of guilt and proportionality of punishment as a result of new constitutional amendments, the dissertation examined the preconditions for constitutional enshrinement of the principles of guilt and proportionality of punishment. The reasons and conditions that were the basis for enshrining these legal principles in the country's basic law have been identified.

In the context of the aims and objectives of the dissertation, an important role was given to revealing the constitutional meaning and content of the legal principles under discussion. A clear wording of their constitutional and legal content has been given. From the point of view of the general revelation of the constitutional meaning of the principles of guilt and proportionality of punishment, a number of features characterizing those principles have emerged.

At the same time, in order to ensure the completeness of the research and to reveal the whole constitutional and legal essence of the legal principles under discussion, the concepts of "guilt" and "punishment", which are the main components of the legal principles under discussion, as well as separate stages of their historical-legal and historical-philosophical development have been studied. A new definition of the concept of "guilt" as a legal category has been given.

During the research, special attention was paid to the existing international experience on the principles of guilt and proportionality of punishment. Examining the constitutions of a number of countries of the world, finding out the lack of direct fixation of the legal principles we study in them, the uniqueness of the existence of such a phenomenon in our country has been proved. Revealing the tendencies of the development of the legal system of a number of countries, a conclusion was made that the constitutionalization of the legal principles mentioned in our state can be an example for the constitutionalization of the legal principles discussed by us or other legal principles in legal systems in other countries, and this research on the legal principles under discussion in such processes and their constitutionalization can become a useful material.

Within the framework of the research topic, a number of European legal documents have been studied and some legal regulations related to the research topic. As a result, several European legal standards related to the principles of guilt and proportionality of punishment have been revealed.

A number of conclusions were done as a result of the research. Among other things, it was substantiated that, apart from the Republic of Armenia, the legal principles under discussion are not directly enshrined in the constitutions of any other country in the world. The close

connection between the principles of guilt and the proportionality of punishment and the other constitutional and legal principles and rights has been revealed, as well as the fact that in case of violation of one the inevitability of the violation of the other has been substantiated. It was suggested to make some changes in the text of Article 71 of the RA Constitution, as a result of which the opportunity to interpret and apply the discussed principles in different branches of law will increase. It has been substantiated that not every constitutional change can be considered as a development trend of the constitutional and legal system. Examining the constitutional and legal regulations of a number of developed countries and legal documents created as a result of the activities of a number of European institutions, we have come to the conclusion that European law, in the context of protection of fundamental human rights and freedoms, has a trend of introduction and development of the policy to implement non-custodial penalties for minor offenses or other illegal acts, at the same time, in this work the observance of the principles of guilt and proportionality of punishment has been highlighted, especially in the presence of the fact of their constitutional enshrinement in our country.

The dissertation has pointed out a number of existing or possible problems and challenges in the legal system related to the research topic, which should be solved through new legislative structures, if necessary, new legislative elaborations. In this regard, the constitutional enshrinement of the principles under discussion and its full potential should be used, as it gives them a wider opportunity to localize them in different branches of law and apply them in different areas of responsibility, as well as a wider opportunity of interpretation (broader interpretation) and legal understanding.